



ՀԱՅԱՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«19» 05 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 136 - 25

Նախաձեռնող՝

«Պերլիպ սթուդիո» ՍՊԸ
Ք. Երևան, Ավան, Քուչակ թաղամաս 2.49/26

Գործունեությունը՝

Արագածի պեռլիպի հանքավայրի արդյունահանում
Արագածոտնի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 136 - 25

«19» Մայիսի 2025թ.

**Արագածոտնի մարզի Արագածի պեռլիտի հանքավայրի արդյունահանման
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Պատվիրատու՝	«Պերլիտ սթոուն» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագիծ և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Արագածավան բնակավայր

Ներածական մաս. Արագածոտնի մարզի Արագածի պեռլիտի հանքավայրը գտնվում է Արագածոտնի մարզի Թալին խոշորացված համայնքի Արագածավան բնակավայրի վարչական տարածքում:

Համաձայն անշարժ գույքի պետական գրանցման իրավունքի վկայականի՝ հայցվող տարածքը հանդիսանում է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, հողատեսքը՝ ընդերքօգտագործման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Արագածի պեռլիտների հանքավայրը գտնվում է Արագածոտնի մարզի Թալին խոշորացված համայնքի Արագածավան բնակավայրում: Հայցվող տարածքին մոտակա բնակավայրերն են՝ Արագածավան՝ 4.5 կմ, Հակկո՝ 4.5 կմ, Կանչ՝ 4.3 կմ, Արտենի՝ 6.0 կմ, Արևուտ՝ 8.4 կմ, մոտակա այգիներից՝ 0.8 կմ, սելավ Մաստարա գետի չորահունից 0.75կմ, այլ սելավատարներից 260 մ, 630 մ, Թալինի ջրանցքի ձախ ճյուղից՝ 730 մ: Մոտակա պտղատու այգիները նույնպես գտնվում են սանիտարա-պաշտպանիչ գոտուց դուրս՝ 750-850 մ հեռավորության վրա:

Հանքավայրի տարածքը հանդիսանում է Արագած լեռան հարավ-արևմտյան լանջի շարունակությունը և բնութագրվում է հարթավայրաբլրային ռելիեֆով: Հանքավայրի տարածքն ունի աղքատ գետային ցանց: Հիդրոգրաֆիկ ցանցը ներկայացված է մի շարք ձորերով, հեղեղատներով, որոնք ձմռան և ամռան ընթացքում չորանում են, իսկ գարնանը և աշնանը ջրառատ են: Գլխավոր ջրային երակ է հանդիսանում Արտենի գետը:

Շրջանի կլիման չոր մայրցամաքային է, խստաշունչ ձմռանառատ, բայց կարճատև ձմեռով և զով ամառով: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը մոտ 370 մմ է, միջին տարեկան խոնավությունը 63% է, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ +38°, բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -26°C:

Հայցվող տարածքում բացակայում են անտառային ծածկույթը, գետային ցանցը, շինարարական կառույցները և բնական ու պատմամշակութային հուշարձանները:

Արագածի պեռլիտի հանքավայրի, ինչպես նաև հարակից տարածքներում սողանքային մարմիններ առկա չեն: Մոտակա սողանքային մարմնի և հայցվող տեղամասի միջև նվազագույն հեռավորությունը կազմում է 2.5 կմ հյուսիս-արևելք:

Արագածի պեռլիտի հանքավայրի տարածքը ներառված է Ապարանի ֆլորիստիկ շրջանում: Բուսական աշխարհը ներկայացված է կիսաանապատային բուսատեսակներով: Կենդանական աշխարհը գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով է: Տեղամասի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված, բուսատեսակներ և կենդանատեսակներ չեն դիտարկվել: Հանքավայրի հեռավորությունն «Արագածի ալպյան» արգելավայրից կազմում է ավելի քան 38 կմ:

Արագածի պեռլիտների հանքավայրի պաշարները հաստատվել են 1975թ. հունվարի 1-ի դրությամբ ՍՍՀՄ Պաշարների Պետական Հանձնաժողովի (ГКЗ СССР) կողմից, 1976 թվականի նոյեմբերի 19-ին, թիվ 7732 արձանագրությամբ, որպես հումք փքված պեռլիտի ստացման համար, որը համապատասխանում է Песок и щебен перлитовые, вспученные 10832-74 (PCT-592-74) ԳՈՍՏ-ի և կանադիտի "Песок Перлит фракционированный для производства каназитов" PCT-592-74 պահանջներին համապատասխան, որոնք կազմել են՝ փքված պեռլիտի ստացման համար՝ B կարգով՝ 44069.4 հազ.մ³, C₁ կարգով՝ 47557.6 հազ.մ³, այդ թվում կանադիտի արտադրության համար՝ B կարգով՝ 31789.0 հազ.մ³, C₁ կարգով՝ 46154.6 հազ.մ³:

Հայցվող պաշարների տեղամասի ծայրակետային կոորդինատական համակարգը ներկայացված է ARM WGS 84-ով:

1. X=4468901.0143 Y= 8390801.5613
2. X=4468891.7358 Y= 8390900.3523
3. X=4468696.8689 Y= 8390870.8283
4. X=4468650.7630 Y= 8390629.9984
5. X=4468659.1420 Y= 8390636.3268
6. X=4468725.1870 Y= 8390680.3567
7. X=4468901.0143 Y= 8390801.5313

3.6 հա:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, հանքավայրի մշակումը նախատեսվում է իրականացնել բաց լեռնային աշխատանքներով, առանց հորատապայթեցման աշխատանքների: Հայցվող տարածքը նախկինում չի շահագործվել:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը.

- բացահանքի առավելագույն երկարությունը՝ 303 մ,
- բացահանքի առավելագույն լայնությունը՝ 247 մ,
- օգտակար հանածոյի միջին հզորությունը՝ 61.51մ,
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ 2214.4 հազ.մ³,
- օգտակար հանածոյի արդյունահանվող պաշարների քանակը՝ 1197.3 հազ.մ³,
- մակաբացման ապարների միջին հզորությունը՝ 0.23 մ, քանակը՝ 3450 մ³,
- մակաբացման միջին գործակիցը կազմում է $3450:1197300 = 0.29$ մ,
- օտարման մակերեսը – 3.6 հա:

Համաձայն նախագծի՝ բացահանքի աշխատանքային ռեժիմը նախատեսվում է հետևյալից:

- աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում՝ 260 օր,
- շաբաթվա աշխատանքային օրերի թիվը՝ 5 օր,



- հերթափոխերի թիվը մեկ օրում՝ 1 հերթ,

- հերթափոխի տևողությունը՝ 8 ժամ:

Բացահանքի տարեկան և օրական արտադրողականությունները համապատասխանաբար կազմում են՝ մակաբացման ապարներ 172.5 մ³ – 0.66 մ³, պեռլիտ՝ 59865 մ³ – 230.25 մ³, լեռնային զանգված՝ 60037.5 մ³ – 230.9 մ³:

Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 20 տարի:

Բացահանքի բացումը կատարվելու է նրա վերին՝ 1315.0 մ բարձրության հորիզոնից, որից հետո մշակվելով իջնելու է հաջորդ հորիզոնները, մինչև բացահանքի 1270.0 մ բարձրության հորիզոնը, այդ ընթացքում բացահանքի մակաբացման ապարները (հողաբուսական շերտ) տեղափոխվելու են բացահանքից դուրս նրա հարավ արևելյան մաս, որտեղ ձևավորվելու է ժամանակավոր լցակույտ:

1315.0-1275.0 մ բարձրությունների հորիզոնների մշակման համար նախատեսվում է մուտքային ավտոճանապարհի կառուցում՝ բացահանքի հարավ-արևմուտքից անցնող, գոյություն ունեցող գրունտային ավտոճանապարհի 1275.0 մ բարձրության կետից դեպի բացահանքի՝ 1315.0 մ բարձրության հորիզոն, որի երկարությունը՝ 410 մ է, 6 մ լայնությամբ, ամենամեծ հաղթահարվող թեքությունը՝ 97.6% է:

1270-1240 մ բարձրության հորիզոնները մշակվելու են 1270.0 մ բարձրությունից դեպի 1245.0 մ բարձրության նիշ ունեցող հորիզոն՝ կտրող խրամի անցումով, որի երկարությունը 255 մ է, թեքությունը՝ 98.1%, որից հետո 27 մ երկարությամբ՝ 0 % թեքությամբ սերպանտինայից հետո՝ 52 մ երկարությամբ խրամով իջնելու է մինչև 1240.0 մ հորիզոն: Կտրող խրամի ամբողջ երկարությունը՝ 334 մ է:

Բացահանքը մշակվելու է ընդլայնական ընթացաշերտերով, միակող մշակման համակարգով՝

- աշխատանքային հանքաստիճանի բարձրությունն ընդունված է 5 մ,

- հանքաստիճանի թեքության անկյունը՝ 55°,

- հանքակողերի թեքության անկյունը՝ 45°,

- անվտանգության առափնների լայնությունը՝ 2 մ:

- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 30 մ:

Օգտակար հանածոյի արդյունահանումը, բարձումը ինչպես նաև մակաբացման ապարների բարձումը տրանսպորտային միջոցների մեջ նախատեսվում է կատարել էքսկավատորների միջոցով: Պեռլիտի՝ 230.25մ³/հերթ և մակաբացման ապարների՝ 0.52 մ³/հերթ ծավալների բարձումն իրականացվելու է 1.9 մ³ շերտի տարողությամբ՝ 1 հատ էքսկավատորով:

Արդյունահանված պեռլիտների տեղափոխումը 3 կմ հեռավորության վրա գտնվող արտադրամաս կատարվելու է ավտոինքնաթափով: Հերթափոխում լցակույտ տեղափոխվող ապարների քանակությունը կազմում է՝ 0.52 մ³/հերթ:

Նախագծվող բացահանքի մակերեսը ծածկող ժամանակակից առաջացումները ներկայացված են ավազակավերով, ավազներով, խճով, կոպիճով, անկյունածև, կիսակլոր և կլոր կտորներով՝ 0.0 սմ-ից մինչև 0.3 մ, միջինը՝ 0.23 մ հզորությամբ հողաբուսական շերտով:

Մակաբացման ապարների 2700 մ³ ծավալը, որը բացահանքի ծածկող երեսաշերտն է, բուլդոզերի և ավտոինքնաթափի օգնությամբ տեղափոխվելու է բացահանքից դուրս նրա հարավային մասում՝ նախկինում մասամբ արդյունահանված արդեն խախտված տարածքում ձևավորվող արտաքին ժամանակավոր լցակույտ, իսկ օգտակար հաստաշերտի տանիքը մակաբացման ապարներից մաքրելու ժամանակ խառնված ապարները՝ 750 մ³ ծավալով օգտագործվելու է մոտեցող ավտոճանապարհի շրջի համար: Ընդամենը բացահանքից հեռացվող ապարների ծավալ կազմելու է՝ 3450 մ³:

Մակաբացման ապարների կուտակումը, տեղափոխումը 5-10 մ հեռավորության վրա կատարվելու է բուլդոզերի օգնությամբ, որի արտադրողականությունը 800 մ³/հերթ է:

Ժամանակավոր լցակայանի մակերեսը վերին մասում՝ 600 մ² է, հիմքում՝ 1020 մ²: Միջին բարձրությունը կազմում է 3.5 մ:

Լցակայանի շեփի առավելագույն թեքության անկյունը՝ 35° է: Շահագործման վերջում ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ, արտաքին ժամանակավոր լցակայան տարված, հողաբուսական շերտը՝ 2700 մ³ ծավալով կլցվի բացահանքի բացված հատակի՝ 1240.0 մ բարձրության հորիզոնի 2080 մ² մակերեսի վրա՝ 1.3 մ բարձրությամբ և կհարթեցվի: Լցակայանի ձևավորումը կատարվում է բուլդոզերային եղանակով:

Հարթեցվելու է նաև լցակայանի տարածքը՝ 1020 մ², արտադրական հրապարակը՝ 220 մ², մուտքային ավտոճանապարհը՝ 300 մ²: Ռեկուլտիվացված տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է՝ 3.6 հա:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա, ինչի շրջանակներում բացահանքի հատակի և լցակայանի վերին հարթակի տարածքում փռված և հարթեցված ապարները պարարտացվելու են: Այնուհետև կատարվելու է տարածաշրջանի լանդշաֆտներին բնորոշ տեսակների սերմերի ցանք:

Խախտված հողատարածքների վերականգնման համար նախատեսված ծախսերի ամբողջ արժեքը կազմում է 1308.1 հազ. ՀՀ դրամ, որից կենսաբանական ռեկուլտիվացիայի ծախսը՝ 72.0 հազար ՀՀ դրամ է:

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանալու են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ.

- ընդերքօգտագործման թափոնները հանքի տարածքում ներկայացված են 3450 մ³ ծավալով մակաբացման ապարներով:

Արդյունահանման տեխնոլոգիական գործընթացի հետ զուգակցված են մի շարք այլ թափոնների առաջացում, որոնց կառավարման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներառված է հաշվետվությունում և թափոնների կառավարման պլանում:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ բացահանքի կարիքների համար ջուրը պայմանագրային հիմունքներով վերցվելու է «Լևադան» ՍՊԸ-ից, որը՝ շրջակա միջավայրի նախարարությունից ստացել է ջրօգտագործման N0319-21 թույլտվություն՝ 1 գործող խորքային հորի օգտագործման իրավունքով: Խմելու ջուրը պայմանագրային հիմունքներով կբերվի Արագածավան բնակավայրից՝ ուր ջուրը մատակարարվում է «Կանե Բզման» աղբյուրից /համաձայն՝ N464 ջրօգտագործման թույլտվության/:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվելու է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, լցակայանները և ավտոճանապարհները, փոշենստեցման նպատակով ջրելու համար:

Ջուրը բերվելու է ջրցան-վացող ավտոմեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ջրի ցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով:

Փոշենստեցման մակերեսները կազմում են՝ բացահանքում աշխատանքային հրապարակը՝ 1400 մ², լցակայանի վրա՝ 1020 մ² և ավտոճանապարհների վրա՝ 2850 մ², ընդամենը՝ 5270 մ²: Տարվա կտրվածքով շոգ և չոր օրերի քանակով պայմանավորված՝ փոշենստեցման նպատակով ջրի քանակը կազմում է 2635 լիտր/օր:

Համաձայն հանքի փակման ծրագրի՝ հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի պահանջներին համապատասխան, ընկերությունը կազմելու է հանքի քանակական վերջնական ծրագիրը, որտեղ կներառվեն բացահանքի, ենթակառուցվածքների, արտադրական հրապարակի և



ճանապարհների լեռնատեխնիկական վերականգնման վերանայված, փաստացի վիճակին համապատասխանող աշխատանքները:

Հանքավայրի արդյունահանման աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները կապված են լինելու լեռնակապիտալ աշխատանքների, արդյունահանման, բեռնման-բեռնաթափման, տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում՝ աղմուկի, օդային ավազան վնասակար նյութերի արտանետումների, ջրային և հողային ռեսուրսների հնարավոր աղտոտման, լանդշաֆտի փոփոխության և թափոնների առաջացման հետ:

Բացահանքի շահագործման ընթացքում տրանսպորտի աշխատանքից մթնոլորտ են արտանետվելու փոշի և ծխագազեր, դիզելային շարժիչներով աշխատող մեքենաներից՝ ազոտի, ածխածնի օքսիդներ և ածխաջրածիններ: Համաձայն ՇՄԱԳ հաշվետվությամբ ամրագրված մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքների («Էկոցենտր» ծրագիր)՝ սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում:

Համաձայն ՀՀՇՆ 31-04.01-2024 սանիտարական նորմերի, III դաս լեռնային ապարների հանքավայրերի համար սանիտարա-պաշտպանիչ գոտու մեծությունը կազմում է 300 մ, այսպիսով՝ նախատեսվող գործունեության համար ապահովված է սանիտարապաշտպան գոտու ապահովման համար պահանջվող չափը:

Շահագործման ընթացքում նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացում:

- փոշենստեցման նպատակով ճանապարհների և արտադրական հրապարակի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- բոլոր տեսակի մեքենաների և սարքավորումների վրա գազազտիչ սարքերի, ձայնախլացուցիչների տեղադրում, մեքենաների սարքին վիճակում շահագործում,
- տեխնիկական միջոցների սպասարկում նախապես որոշված սպասարկման կետերում,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի, նավթամթերքների առանձին տարաների մեջ հավաքում, պահում՝ բացահանքի արտադրական հրապարակի հատուկ հատկացված վայրում,
- մաշված անվադողերի, կապարե կուտակիչների հանձնում՝ լիցենզավորված մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,
- շինարարական տեխնիկայի սպասարկման և կայանման վայրերում ավազի կամ մանրախճի տեղադրում՝ ջրային ռեսուրսների մեջ արտահոսքը կանխելու նպատակով,
- մթնոլորտային օդ արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում՝ շաբաթը մեկ անգամ,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկ՝ բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով,
- հիմնական ճանապարհների բարեկարգում,
- Կառավարության 2014թ.-ի հուլիսի 31-ի N781-Ն որոշման որոշումների իրականացում՝ պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների համալսարանական դեպքում,
- աշխատողների առողջության և անվտանգության ապահովում, արտակարգ իրավիճակների պատրաստվածություն և այլն:



Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան հատկացնել 200.0 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները՝ պետք է նշել, որ նախագիծը մշակվել է բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվաիրավական ակտերին համապատասխան: Արդյունահանման աշխատանքները կազմակերպելու համար, հիմնականում օգտագործվելու են գոյություն ունեցող ճանապարհները: Հանքավայրի տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Փորձաքննության ներկայացված՝ գնահատման արդյունքում վերլուծվել են հնարավոր անցանկալի բնապահպանական ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների և բնակչության առողջության ու սոցիալ-տնտեսական պայմանների վրա, կատարվել է հնարավոր տնտեսական վնասի գնահատում, ինչպես նաև մշակվել է ազդեցության նվազեցման և կանխարգելման հիմնական ուղղությունները:

Հաշվետվությունում ներառված է զրոյական և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, ընտրված տարբերակի հիմնավորումը:

Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, ջրային կոմիտեն, Արագածոտնի մարզպետարանը, Թալին համայնքը, Արագածավան բնակավայրը: ՇՄԱԳ-ին կից փաստաթղթերում առկա է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական փորձաքննական եզրակացությունը:

Փորձաքննության ընթացքում վեր են հանվել մի շարք հարցեր՝ կապված արդյունահանման համար հատկացված տարածքին հարակից հնարավոր ջրային հոդերի, հիդրոտեխնիկական կառույցների (ջրանցք, հեղեղատար, սելավատար և այլն) վերաբերյալ: Համաձայն ջրային կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության նշված կառույցները հայցվող տարածքում առկա չեն: Նշված տարածքը գտնվում է Թալինի ջրանցքի ձախ ճյուղի ջրանցքից մոտ 730 գծմ հեռավորության վրա, որը չի խոչընդոտում ջրանցքի բնականոն ընթացքին:

Փորձաքննության ընթացքում հաշվետվությունը դիտողություններով և առաջարկություններով լրամշակվել է: Գնահատման և փորձաքննության ընթացքում, օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ

1. Պահպանել գնահատման հաշվետվությամբ ամրագրված միջոցառումների և մոնիթորինգի իրականացումը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:
2. Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող, կենդանական և բուսական աշխարհ և այլն), մոնիթորինգի արդյունքները, հետևաբանաբար վերլուծության ծրագիրը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական շտաբագրի մարմիններին և հանրությանը:



3. Շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հավաքումը և հեռացումն (այդ թվում վտանգավոր թափոններ՝ յուղեր, քսայուղեր, անվադողեր և այլն) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Պահպանել նախագծով նախատեսված տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները և բացառել հանքավայրում պայթեցման աշխատանքները:
5. Տարվա չոր ամիսներին պարբերաբար իրականացնել ջրցան օրական 2-ից 3 անգամ՝ փոշու թույլատրելի նորմատիվային մակարդակն ապահովելու համար:
6. Բացահանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքում իրականացնել երկշերտ կանաչապատում՝ ծառերով, թփուտներով:
7. Հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ՝ օրենսդրության պահանջներին համապատասխան կազմել հանքի փակման վերջնական ծրագիր և ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
8. Ապահովել հաշվետվությամբ ամրագրված տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Պերլիտ սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Արագածի պեղիտի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝



Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Լերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Արմինե Վարդանյան